ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

12.01.2018թ.
324-ի 3

Մշակույթի նախարար
պարոն Արմեն Ամիրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ամիրյան,
ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություն, թե 2017թ.-ի վերջին Ձեր գերատեսչության կողմից որքան գումար է ծախսվել .

1.ամանորի շնորհավորական բացիկների,
2.ամանորի նվերների (խնդրում ենք նշել նվերների տեսակը և քանակը)
3.ամանորի ընդունելության կազմակերպման համար:

Խնդրում ենք յուրաքանչյուր ծախսի համար նշել՝ գումարը գերատեսչության 2017 թ.-ի պետական բյուջեից, թե՞ արտաբյուջետային միջոցներից է հատկացվել:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Հարգանքով՝
Լիանա Դոյդոյան
ԻԱԿ նախագահ